

ԱՆԻ. — Ani.

պարսպոք պատեալ և ամրացեալ է այն. և է չափ ներքին շրջապատի եռանկեանն իբր փարսախաւ միով (կամ 4100 չափ գաղղիական). երկայնութիւն քաղաքին որ ըստ արևմտից հարաւոյ՝ մղոնաւ չափ է կամ քառորդաւ ժամու Ճանապարհի, լայնութիւնն կիսով չափ և նուազագոյն ևս. որով յայտնի լինի անձուկ դոլ տեղւոյն և անբաւական համբաւելոյն ի կարգի առակաց 1001 եկեղեցեաց և տասն բիւր ապարանից. բայց եթէ ներքին քաղաք զսա համարելով և ի հիւսիսոյ կողմանէ մասն գրելով նմին և ի մէջ փակելով զհամանուն քաղաքին զգեօղն Անի որ մղոնաւ ի վերոյ կայ, և զայլ սահմանս: Ոչ է յայտ ժամանակ առաջնոյ շինութեան քաղաքիս և անուանն հոմանձայնի Կամախայ Բարձր Հայոց (61), բայց թուի բերդ լինել անդստին ի Դ. դարէ, յորում Տրդատ արքայ պարգևեաց զԸ. իրակ տանն Կամսարայ. և ի Կամսարականաց պայազատեցին Բագրատունիք յԸ. դարու. յորոց նախ Աշոտ Մսակեր իշխան յամին 783 ամրացոյց զտեղիս, և յետ երկերիւր ամի Աշոտ Գ. արքայ՝ թագաւորանիստ արար իւրոյ տոհմին հարբստութեան, և ած զներքին պարիսպ քաղաքին յամին 964, և բրգամբք և եկեղեցեօք զարդարեր. բայց որդի նորա Սմբատ Տիեզերակալ յետ հնգետասան ամաց (յ'980)՝ անդրագոյն ևս պարսպով ընդարձակեաց և կրկին պարսպափակ արար զհայրենի շինածն. իսկ ըստ հիւսիսոյ անկեանն՝ յարևելից կուսէ ցբերան Ծաղկոցաձորոյն, ուր և ցարդ երևին հզօրագոյն և շինագոյն պարիսպք իբր 30՝ տարակացք յիւրերաց, 20–30՝ բարձունք. ներքինն հզօրագոյն և բարձրագոյն է, և յոլովագոյն քան զարտաքինն ունի զաշտարական. որք իբր 150՝ հեռիք են յիրերաց, շատք բոլորշիք և ոչ սակաւ քառակուսիք և անկիւնաւորք, ոմանք յարքայիցն մերոց շինեալք, և յոլովք ի բնակչաց քաղաքին յաւուրս աշխարհակալութեան Զաքարիայի սպասալարի և Թագաւորացն Վրաց. ոմանք միայարկք և ոմանք կրկին կամ եռայարկք, համակ քարաշէն և կամարակապ, ի Թիսակերպ և յայլագոյն լաւաքարանց. յորոց վերայ ոչ սակաւ արձանագիրք և բազմագոյն ևս խաչարձանք և դրուագք զարդուց գոն: Երկու դրունք երևին արտաքին պարսպացն և հինգ ներքնոյն. մի յարևելից, միւս յարևմտից՝ որ է Ծաղկոցա-դուռն, և երեք ի հիւսիսոյ, որոց միջինն է Աւագ-դուռնն, յորոյ վերայ ի կողմանէ արտաքուստ քանդակեալ կայ առիւծ կամ ինձ ի գնացս. ընդ որ մտեալ ի ներքս՝ ահա յանդիման տարածի տեսարան կիսակործան և կիսականգուն քաղաքին, խառնիխուռն դերբուկք, հողաբլուրք ցածք, խոտաձեմնք, և իբրև 20 շինածք առաւել կամ նուազ կանգունք, յորս գլխաւոր եկեղեցիքն են: — Ի հարաւային արևմտեան կողմն եռանկեանն ընդ մէջ ձորոյն Ծաղկոցայ և Ախուրեան գետոյ՝ կան աւերակք արքունի Ապարանից ի բարձուքարափան, դիտակ և ահաւորահայեաց դրիւք և հզօր և Թանձր պարսպոք, իբր 5 վայրկենիւ շրջապատու-